

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին Համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տե-
սուծութիւն: Մի պատասխան: Նամակ Մ. Վա-
րաքիսայից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:
Արտաքին տեսուծութիւն: Աւստրո-Ունգարիա:
—«Մշակ» հեռագիրներ:—Ցայտարարութիւններ
—Տեղեկացոյց:—Բանաւ սրբակաւ: Հայ երի-
տասարդութիւն:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑԲԵՐԸ

«Մշակ» ընթերցողներին յայ-
տնի է, որ անգլիական կառա-
վարութիւնը իր զինուորական նա-
ւատորմի մի մասը ուղարկեց
Թիւրքաց ջրերը: Այդ կարգա-
դրութեան մասին անգլիական լը-
րագիրները զանազան դատողու-
թիւններ են տալիս:

Անգլիական պաշտօնական լրա-
գիրներից մէկը յայտնում է, որ
այդ կարգադրութեան պատճառը

Թիւրքաց նոր միւնիստրութեան
անձնական կազմակերպութիւնն է:
«Եթէ Թիւրքիան կառավարվէր
անընդունակ, բայց բարեմիտ մի-
նիստրութիւնից, ասում է լրագիրը,
այդպիսի կառավարութեան գոր-
ծած սխալների վրա կարելի էր
ներողամտութեամբ նայել և մատ-
նացոյց լինել այդ սխալների վրա:
Բայց Թիւրքաց այժմեան միւնիս-
տրութիւնը այնպիսի մարդիկնե-
րից է կազմված, որոնք չեն ծած-
կում իրանց համակրութիւնը դէ-
պի Ռուսաստանը: Այսպիսի կա-
ռավարութիւն Թիւրքիայի մէջ չէ
կարելի համբերել»:

Մի ուրիշ պաշտօնական լրա-
գիր անգլիական զինուորական
նաւատորմի Սմիրնայի ծոցը ու-
ղարկելը արդարացնում է նորա-
նով, որ անգլիական կառավարու-
թիւնը պէտք է պաշտպանէր իր

չահերը Փոքր-Ասիայում, որին վը-
տանդ էր սպառնում և այդ վը-
տանգը, լրագրի կարծիքով, դար-
ձեալ Թիւրքաց ներկայ միւնիս-
տրութեան անձնական կազմա-
կերպութիւնն է:

Մի ուրիշ անկախ լրագիր այն
կարծիքն է յայտնում, թէ այն
հոլանդացիութիւնը և պաշտպա-
նութիւնը, որ Անգլիան չէ խնա-
յել Թիւրքիայի համար Ղրիմի
պատերազմը սկսելուց մինչև այժմ,
հաւատացրել է Թիւրքիային, որ
Անգլիան պաշտպանում է Թիւր-
քիային դէպի Ռուսաստանը ու-
նեցած իր ատելութեան պատճա-
ռով: Այդ համոզմունքը, նկատում
է լրագիրը, որ արմատացել է
Թիւրքաց մէջ, անպատճառ պէտք
է ոչնչացնել և պէտք է հաս-
տատել, որ Թիւրքիան չի հա-
մարձակվի անուշադիր թողնել

Անգլիայի պահանջները, իսկ եթէ
այսպէս վարվեց նա անպատճառ
կը պատժվի:

Մի ուրիշ անկախ լրագիր հա-
ւատացնում է, որ անգլիական
նաւատորմի վարչի ուղարկելը
ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի միջոց,
որ կազդի Թիւրքաց կառավարու-
թեան վրա և կը ստիպի նրան
անյապաղ մոցնել երկրի մէջ այն
վերանորոգութիւնները որ նա
խոստացել է: Լրագիրը հաւա-
տացնում է, որ այդ միջոցը շատ
զեղեցիկ է և անպատճառ կը
հասնի իր նպատակին: Իր այդ
միտքը ապացուցանելու համար
լրագիրը հիմնվում է մի հեռագրի
վրա, որ հաղորդում է, թէ Թիւր-
քաց կառավարութիւնը Անգլիայի
կարգադրութեանց յետոյ, անսո-
փոր գործունէութիւն է ցոյց տա-
լիս: Լրագիրը իբրև ապացոյց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Մտադրված լինելով նկարել մի փոքր ի շատե-
ամբողջ պատկեր մեր ժողովրդի կեանքից, ես հար-
կաւոր եմ համարում «Հայ կիւնք» յօդուածից
յետոյ հետադառնել հայ երիտասարդութիւ-
նը: Եթէ ընդունում ենք, թէ երիտասարդութիւնը
է այն թրամ ուժը, այն մասնակ է աճող զօրու-
թիւնը, որից կախված է ժողովրդի յառաջդիմու-
թիւնը և հետեւապէս նրա ապագան, —պէտք է
լաւ ուսումնասիրենք այդ տարրը: Իմ հետադառու-
թեան մէջ ես հետեւելու եմ մի և նոյն եղանակին,
որպէս էր «Հայ կիւնք», այսինքն, անցնելով մաս-
նաւորից դէպի ընդհանուրը, և գիւղական ազգա-
բնակչութիւնից բարձրանալով դէպի քաղաքացիու-
թիւնը, ես կաշխատեմ ներկայացնել մեր երիտասար-
դութիւնը ժողովրդի ամեն մի դասակարգի մէջ
առանձնապէս: Ես պիտի վեր առնեմ Ռուսաստանի,
և զլիւսաւորապէս Կովկասի հայ երիտասարդութիւ-
նը *):

Ա.

Գիւղական երիտասարդութիւն

Սկսում եմ ծնունդից:
Գիւղացի ծնողները միշտ ուրախութեամբ են
հանդիպում տղայ մանուկի աշխարհ գալուն. ծըն-
վում է նոր ուժ, ընտանիքի մէջ աւելանում են
նոր աշխատող ձեռքեր. Եթէ հայրը տանը չէր,
եթէ նա գործում էր դաշտում, բարեկամները
վազում են նրա մօտ, «աւետիք» են տանում, և
ականջներով բռնելով, «մուշտուլուղ» են *) պա-
հանջում: Տէրտէրը իր մաշտոցով խկոյն դիմում է

*) Այս յօդուածից յետոյ կը տպվի «Հայ
հոգեւորականութիւն» վերնագրով հե-
տադառուութիւնը:

*) Խնկապէս մ ու ժ գ ա լ ու ղ է, որ նշանակում
է այն ընծան, որ տալիս են աւետիք կամ բարի
խաբար բերողներին:

մօր մօտ, օրհնում է նրան և նորածնին, և «Բա-
րաբուժ» ասում: Պառաւ կնիկները դնում են
մօր անկողնի մօտ մի սուր կամ պողպատի կտոր-
ների, որ չար ոգիները չը վնասէին նրան: Կրօնը և
մահաւատութիւնը միացած, գործ են դնում իրանց
Բողոք զօրութիւնը, որ պահպանի նոր սկսվող
կեանքը:

Երբ մայրը երկար ժամանակ տղայ զաւակ չէ
բերում, դա համարվում է Աստուծոյ մի առանձին
պատիժը. ծնողները դիմում են սուրբերի բարե-
խօսութեանը, իսկ երբ այդ էլ չէ օգնում, դիմում
են կախարհներին: Գիւղերում շատ անգամ կարելի
է տեսնել տղաներ չը կտրված երկար մաղերով,
որ աղջիկների նման հիւսած դիտաներ ունէին:
Գրանք չկալուելով, կամ այս և այն տաճարին նուիր-
ված ունեւորներ են, որովհետեւ աշխարհ էին եկել
սուրբերի շնորհիւ: Ամեն մի սրբից շնորհված մա-
նուկը համարվում է նրա «գուրը» (ճորտ) և կը
լում է նոյն սուրբի անունը: Բայց պէտք էր
ճորտ լին թափել իր ճորտութիւնից, և այս մըտ-
քով նուիրված մանուկին մինչև և օթն տարի ուխտ
են տանում բարերար սրբի տաճարը նրա տօնա-
խմբութեան օրում, և ամեն անգամ տղայի փոխ ա-
րէն գործում են մի ոչխար: Երբ տարիների խորհր-
դաւոր թիւը լրանում է, մանուկի մաղերը կըտ-
րում են: Տղաների տաճարներին ընծայումը յայտ-
նի է մեր պատմութեան մէջ նրա միջակայն ժա-
մանակներից, երբ Անուշաւանը նուիրվեցաւ Արմա-
ւիրի սօսյաներին:

Երբ նորածնի տկար էր երեսուն, նրան եկեղե-
ցի չեն տանում մկրտելու համար, այլ այդ խոր-
հուրդը կատարում են տանը օջախի (Թոնրի) մօտ,
խմբ հոգնեցելու տաշտի մէջ, և մկրտութեան ջրով
սրսկում են ամբողջ տունը: Նրա վզից քաշ են
տալիս մի փղբրիկ խաչ, իսկ գլխի վրա շատ ան-
գամ կարելի է տեսնել կարված արծաթեայ մա-
հիկ (կիսալուսն) որ ազատ էր պահում նրա
անձը չար աչքից և չար ոգիներից: Յուշունքներով
զարդարած բազրան դնելով (բազկակապ), որ
կապում են տղայի թեքերի վրա, նոյնպէս կա-
խարդական նշանակութիւն ունեն: Գետերը տղայ
մանուկների համար մի և նոյն զարդն են համար-
վում, որպէս աղջիկների համար: Բայց գետեր ա-
րեւելքում կրում են կնիկները և սուրուկները միայն,
—երկու արարածներ, որոնց վիճակը շատ չէ
տարբերվում միմեանցից...:

Երեխան փոքր հասակից սկսում է տեսնել

նիւթական և չօշափելի առարկաների մէջ
անկերպի զօրութեան ներկայութիւնը, մինչև ար-
ծաթեայ մահիկից նա համոզւում է Ամենաբարձրեալի
զաղափարին: Նրա կեանքի մէջ կատարվում է
այն, ինչ որ կատարվում է ամբողջ մարդկութեան
կեանքի մէջ:—տղայութեան պերիօդի նիւթապաշ-
տութիւնից անցնել զարգացած պերիօդի ոգեպաշ-
տութեանը:

Երբ մանուկը դառնում է 3—4 տարեկան, երբ
սկսում է խօսել, մտածել, վազվզել և փղբրիկ չա-
րութիւններ գործել, այն ժամանակից սկսվում է
նրա ընտանեկան դաստիարակութիւնը: Երկու
գլխաւոր ուժեր ներգործում են մանուկին չափի
և պատշաճի մէջ պահելու համար, մէկը՝ Ֆիզիքա-
կան կոպտ ուժը—ծ ծ ը, իսկ միւսը՝ բարոյա-
կան ուժը, որ արտայայտվում է երկ իւր ղի և
խոստման մէջ: Պատիժ և խոտուտ—անա եր-
կու գործիչներ, որ իշխում են մարդու բարոյա-
կանութեան վրա, սկսեալ երեխայութիւնից մինչև
նրա մահը: Եւեթի, պատժել երեխային, որ չարու-
թիւն չը գործէ, կամ խոտուտալ նրան զանազան
հրապուրիչ բաներ, որ իրան կարգին պահէ,—գրանք
գլխաւոր միջոցներ են հոգատար ծնողների կողմից
երեխային խրատելու համար: Բայց մի և նոյն մի-
ջոցները գործ են դրվում և ոգիների անուններով:
Երկու տղա երեխային դնի, չար սատանայի, ալ-
բերի, խղիլիլի, մարդազայի, դերիլիլի և այլ սար-
սափելի անուններով, և մի և նոյն ժամանակ հրա-
պուրել նրան Աստուծոյ, հրեշտակների և սուրբերի
խոստումներով,—այդ բոլորը աւելի նուրբ միջոց-
ներ են երեխային կրթելու համար: Այս տղաու-
թութիւնները մնում են մանուկի մէջ մինչև նա իր
հասակը առնում է, ծերանում է, և նրա հետ գե-
րեզման են մտնում: Երեխան սովորում է վատ
բան չը գործել ոչ թէ նրա համար, որ վատը
վատ է, այլ նրա համար, որ ծնողները կը պատ-
ժեն նրան կամ ծեծելով, և կամ գրկելով մի լաւ
բանից: Նրա ամբողջ կեանքում այդ մտքերը իշ-
խում են նրա վրա: Նա սովորում է չար բան չը
գործել, ոչ թէ նրա համար, որ իբրև մարդ, և իբրև
մարդկային ընկերութեան անդամ պարտաւոր էր
բարի լինել, այլ վախենում է իշխանութիւնից—
երկրի և աշխարհի իշխանութիւնից,—վախենում
է այն տան ջանքն և բռնից, որ սպառնում են
այդ երկու իշխանութիւնները, և վախենում է
գրկվել այն խոստումներից, որ արել էին
նրան,

Դաստիարակութեան այդ ընթացիկ սպանիլ ե-
ղանակը այն հետեւանք է ունենում, որ ոչ միայն
խլում է մանուկից նրա ինքնուրոյն, ազատ զար-
գացումը, և ոչ միայն բարոյապէս մեղցնում է
նրան, այլ նա իր ամբողջ կեանքում մնում է երկ-
չուտ, թուլասիրտ, խոտարկող և գլուխը ծռող ա-
մեն մի զօրութեան առջև: Նա դառնում է մի
բարոյական միջոցաւ, որ բարի է նրա հա-
մար միայն մի վախենում է չը պատժվի
չար լինելուց: Իսկ երբ այդ վախը, այդ
երկիւղը անհետանում են նրա սրտից, էլ ոչինչ չէ
մնում նրան օրինաւորութեան մէջ պահելու
համար և նա դառնում է ամենաարատաւելի ան-
բարոյական:

Ինչ որ աւելի ցաւալին է, դա է գիւղական
մանուկների աստիկ մահացութիւնը: Թէև այդ
մասին չունենք վիճակագրական տեղեկութիւններ,
բայց կարելի է տեսլ, որ նրանց մեծ մասը մեռ-
նում են մօտաւորապէս զեռ հինգ տարեկանին
չը հասած, այնուհետեւ, որպէս ինքը գիւղացին
ասում է՝ «երեխան չապկը պատում է», այսին-
քն աճում է, մեծանում է, և կարող է դիմանալ
կեանքի խիտ զայմաններին: Երեխաների բազ-
մաթիւ մահացութեան գլխաւոր պատճառը պէտք
է որոնել նրանց վատ պահպանութեան մէջ: Մեր
գիւղացիները աւելի հոգ են տանում իրանց փոք-
րիկ անասուններին, քան թէ որդիներին: Անա-
սունների վիճակը իրանցից կախումն ունի. բայց
որդիների հոգը թողնում են Աստուծոյ վրա:
Որպէս զի կարողանամ մի փղբրիկ զաղափար
տալ, թէ որպիսի չըջանի և պայմանների մէջ է
սկսվում մանուկի կեանքը, հարկաւոր եմ համա-
րում մի քանի մանրամասնութիւնների մէջ մտնել:
Երեխայից քան ձեռ մի խոնաւ և գետնափոր խըր-
ճիթ, առանց օդի և առանց լույսի, որ ինքն ըստ
ինքեան սպանիլ աղբեղութիւն ունի երեխայի դեռ
տկար կաղնուածքի վրա, որը տակաւին չէր սոր-
ված կեցութեան վեառակար խոտութիւններին:
Մահաճակալ կոչված կարաւոր ընդորովին անծանօթ
բան է այս տեսակ խրճիթներում: մի ամառակի
կտոր անդամ չէք տեսնի, որ ձգած լինէր յատակի
վրա. երեխան պաւկում է սառւ, խոնաւ և մերկ
գետնի վրա, փաթված ցնցոտիների մէջ: Չը
սոված մարդը կարող էր խկոյն բնամտիղմ ըս-
տանալ: Աւելացրէք դրանց վրա վատ կերակրելը:
սովորութիւն չէ երեխային սեղան նստացնել: Նա
ուտում է ոտքի վրա ինչ որ ձեռքն ընկնում է:

ման՝ նրա... (անյուշեկի և ամենալիբր հայտնաբեր-
ներ թափեց) հէնց համեմուն պէս գեղից ծեծելով
հետ ածեմ, մի վարժապետ չլինեմ, որ ինքն էլ
համար Մեր գիւղի հացը ուտէ ու մեզ վրա կա-
գէթ գրիւ տա, հէ՛ եււանչ...

Մենք հեռացանք որ այդ տեսակ անճոռնի
մարդի անպատմելի հայտնաբերները չը լսէինք. Ա-
հա, սիրելի ընթերցող, այսպիսի վայրենի, կեղտոտ
և յիմար եւ ամէն ինչ երբ մինչև անդամ համար-
ձակվում են մարդի վրա յարձակուել:

Եթէ այս անսակ սովորական երևոյթներին նը-
շանակութիւն են տալիս, պէտք է անպատճառ
կուրանաս, թող մէկը կողոպտէ, հարստահարէ
իր գերդաստանը մերկ քաղցած թողած, ինքը մի-
կիտաններում փառաւոր ճաշէ, այնտեղ գիշերէ,
իր տարփածուններին հետ ժամանակ անցկացնէ և
վերջապէս թող նա ինչ ուզում է անի, դու ոչ
միայն լուր այլ և հրապարակաւ նրան գովասա-
նիր, նրա կեղտոտութիւնները ծածկիր, այն ժա-
մանակ քեզ ընծանիր կառաջարկի, շուտ շուտ
ճաշի կը հրաւիրի և փոխադարձաբար նա էլ քո
չարագործութիւնները կը ծածկի և քեզ կը պաշտ-
պանի:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 1 նոյեմբերի

Թիֆլիզու սուրբ Գայիանեան հայոց օրիորդաց
Միջնակարգ ուսումնարանի վարչութեան: Պատու
ունիմք յայտնել վարչութեանդ թէ անդամսիկ
որդին մեր Տիգրան, ծնեալն 9-ն նոյեմբերի 1866
ամի, ունէր գերազանց յատկութիւններ, յոյս կար
որ նա կը լինէր պիտանի անդամ իր սիրելի ազ-
գին, բայց ափսոս, որ 28 նոյեմբերի անցեալ 1878
ամի վախճանեցաւ բարբառով ուղեղի ցաւով և
թաղեցաւ հայոց Վերայի գերեզմանատանում:

Ուստի վաղամեռիկ Տիգրանի յիշատակը անմո-
ռաց թողնելու իր սիրելի ազգի զաւակների սրտե-
րում, մեք նրա վշտալի և անմխիթար ծնողքս,
կամենում ենք Թիֆլիզու հայոց սուրբ Գայիա-
նեան օրիորդաց միջնակարգ ուսումնարանին նուի-
րել մեր սեփականութիւնից, նախ իւրաքանչիւր
տարի 9-ն նոյեմբերի հինգ րուբլի և երկրորդ
ընդ ամին առաջի առնելով, նուիրում ենք այժ-
մէն իսկ մէկ հատ թագաւորական երկրորդ փո-
խառութեան 50% վիզրիչիկ սոմանկ սէրիյ 10002
(տաս հազար երկու) № 46 յետագայ պայմանաւ:

1. Մեզանից ստանալի իւրաքանչիւր տարի
հինգ րուբլի, և սոմանկան ստանալու տոկոսիցը
վարչութիւնը ունի իրաւունք գործածել օգուտ այդ
ուսումնարանին, որպէս և կամի, միայն վարչու-
թիւնը անպատճառ ապահովացնել պարտաւոր
է սոմանկը նախ քան վիճակաբաղի ժամանակ-
ներն, որ եթէ այդ տոմսակը տիրաժուրը դուրս
գալ դրա փոխարէն ստացվի մէկ հատ նոյնպիսի
տոմսակ 50% վիզրիչիկ երկրորդ փոխառութեան
և այդ մասին վարչութիւնը մեզ և կամ մեր ժա-
ռանգներուն առանձին իմացում տալ և հրատա-
րակէ տեղական ազգային լրագիրներին միջոցաւ:
յիշեցնելով նոր տոմսակի սէրիյ և №:

2. Եթէ վիճակաբաղից երբ և իցէ՝ այդ տոմ-
սակով կամ դրա փոխարինեալ տոմսակով տար-
վի գումար ինչ, այն ժամանակներում տարած
գումարներն ստանալու իրաւունք ունի միայն
վարչութիւնը:

3. Եթէ տարած գումարն լինի 500 րուբլ կամ
1000 ր., կամ 5000 ր., և կամ 8000 ր., կամ
10,000 ր., կամ 25,000 ր., կամ 40,000 ր., յայնժամ
այդպիսի գումարներն լինելու են սեփականութիւն
յիշեալ օրիորդաց Միջնակարգ ուսումնարանին
իբրեւ մայր գումար, որոց տոկոսիցը վարչութիւնը
ունի իրաւունք գործածել ուսումնարանից համար
որպէս և կամի, յատկացնելով բարի գործ ինչ
Տիգրանիս յիշատակ, զօրօրինակ յանուն նորա
որդեգործի պահել, կամ զբերք տպել, կամ դա-
տաղիլը ձրի բաժնել խեղճերուն, կամ նրանց հա-
մար զգեստ կարել տալ և այլ, ինչ որ արժան կը
դատէ վարչութիւնը, հրատարակելով այն ա-
րարքը ընդհանուր գիտութեան:

4. Եթէ տարած գումարն լինի 75,000 ր.,
զբաղեց վարչութիւնը պարտաւոր է տալ հինգ
հազար ի սեփականութիւն Ներսիսեան հայոց հո-
գեւոր ազգային դպրոցին, իսկ մնացած 70,000
րուբլն լինելու է մայր գումար օրիորդաց ուսում-
նարանից, որոյ տոկոսիցը վարչութիւնը ունի ի-
րաւունք գործածել ինչպէս վերը յայտնած է:

5), 200,000 րուբլին, դրանից 10,000 վարչու-
թիւնը պարտ է տալ ի սեփականութիւն յիշեալ
Ներսիսեան դպրոցին, իսկ հարկիւ հազար րուբ-

լով գնէ վարչութիւնը կամ կառուցանէ սուրբ
Գայիանեան օրիորդաց ուսումնարանից համար մէկ
յարմար տուն իր պարտեզով, մնացած 90,000
մնալու է մայր գումար այդ ուսումնարանից հա-
մար, որոյ տոկոսիցը վարչութիւնը գործածելու է
ինչպէս վերը յայտնում է:

6. Ներսիսեան դպրոցի վարչութիւնը՝ ստանալով
յիշեալ 5,000 ր. կամ 10,000 պարտաւոր է իւրա-
քանչիւր հինգ հազարի տոկոսից պահել նոյն
դպրոցի միջում յանուն Տիգրանի Առաւանդանց
մէկ ստիպելիւր յառաջագէմ խեղճ աշակերտ-
ներից, որոնք եթէ ուսման ընթացք աւարտելուց
յետոյ հողերովան լինեն կամ քահանայ, կամ
վարդապետ, հոգաբարձութիւն դպրոցին յայնժամ
պարտաւոր է տալ նրանց միանուագ իւրաքան-
չիւրին երեք հարկւրական րուբլի, մնացած տոկո-
սիքն լինելու են օգուտ դպրոցին, իսկ եթէ Ներ-
սիսեան դպրոցի վարչութիւնն չը համաձայնի այս
պայմանին, կամ ապագային չը կատարէ այս պայ-
մանը, այդ միջոցներում վարչութիւնը ունի իրա-
ւունք յիշեալ գումարն չը տալ. եթէ տուած է յետ
առնուլ և տալ հայոց ազգային ուսումնարանի
միում, որ կամի կատարել յիշեալ պայմանը:

7. Եթէ կրկին և կրկին վիճակաբաղից տրվի
տոմսակով գումարներ, այն ժամանակներում վար-
չութիւնը ստանալու է այդ գումարները և գոր-
ծածելու է համաձայն վերոյիշած 3. 4. 5. 6. յո-
գումաներին միայն այնու բացառութեամբ, որ եթէ
երկու հարկւր հազար րուբլի ընկնի, նրանից հա-
րկւր հազար րուբլին տալ ի սեփականութիւն
հայոց ազգային չքաւոր ծխական տասը ուսում-
նարաններին՝ հինգը Ռուսաստանումը եղած, ի իրա-
ւորց լինելու է սուրբ Ելմիածնի շէմարանը, իսկ
հինգը Թուրքաստանի Հայաստանումը եղածներուն
իւրաքանչիւրին տաս տասը հազարական րուբլի:

8. Վիճակաբաղից ընկած յոգում ուսումնա-
րանից մայր գումարները վարչութիւնը պարտա-
ւոր է տալ շահեցնելու ուսումնարանի կամինայ,
միայն դրա մասին իմացում տալ դրաւոր մեզ և
զինի մեր մահուան մեր ժառանգներուն:

9. Եթէ վարչութիւնը բարեհաճի յիշեալ պայ-
մանները կատարելու, ուստի խնդրում ենք առնել
հետեւեալ. նախ այս մեր նուիրական թուղթը
տպել տալ հայոց տպագրութեան և ամսագրերում,
երկրորդ սրա օրինակներից վարչութիւնէդ վաւե-
րացմամբ և ուսումնարանից կնիքով հաստատած
տալ մէկ հատ Թիֆլիսու Ներսիսեան հոգեւոր ու-
սումնարանի հոգաբարձութեան, մէկ հատ կու-
տանդուպօլու ազգային ժողովոյ և մէկ հատ սըր-
բազան միջոցին Ելմիածնայ, վաւե զի ամենքս էլ
ունենք իրաւունք հսկելու վերոգրեալ պայմանների
կատարման, ինչ որ իւրաքանչիւրներին կը վերա-
բերվի:

10. Եթէ վարչութեանը կողմանէ յիշեալ պայ-
մաններից մէկ ու մէկ քանիւր և կամ բոլորովին
չը կատարվին, կամ եթէ յիշեալ Սուրբ Գայիա-
նեան ուսումնարանը, որ և իցէ պատճառով խա-
փանվի, յայնժամ մենք կամ մեր ժառանգները
իրաւունք ունենք յիշեալ մայր գումարները, թէ
տուենք և թէ տոմսակը կամ ներկան և կամ փո-
խարինածը յետ առնուլ և անպատճառ ընծայել
հայոց ազգի մէկ ուսումնարանի, ուր տեղ որ լի-
նի և ինչ պայմանով կամինայք միայն յանուն
Տիգրանի խաչատուրեան Առաւանդանց, հանելով
նրանից տասնորդ մեր, կամ ժառանգների ծախսի
համար:

Խաչատուր Թորոսեան Առաւանդանց, Սալոմէ
Աւետիքեան Առաւանդանց:

Խնդրեմ, պ. Խաչագիր, այդ պատճէնը տպել ձեր
լրագրի համարներից մէկի մէջ:

Ս. Առաւանդանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՐ

Չորեքշաբթի, նոյեմբերի 7-ին, Արծրունու Թատ-
րոնում ուսու սիրողները բարեգործական նպատա-
կով մի ներկայացում տալու են: Այդ ներկայաց-
ման անտրակտների ժամանակ առաջին անգամ
կածի թատրոնի մէջ պ. Վ. և ու զ ի կ ո Վ ի
օրկէստը:

ՄԵԼՐԻՅՑ մեզ գրում են. «Այդ գիւղը շատ ան-
մաքուր է պահվում, փողոցները աղբով և մեռած
կենդանիների դիակներով լցն են: Այդ անմաք-
րութեան պատճառով զանազան հիւանդութիւն-
ներ են գոյանում: Մեղրիում թանգութիւն է: Այդ
գիւղից Որդուբաղ տանող միակ օրինաւոր ճանա-
պարհը ապահով է: Այնտեղ անդադար աւազա-
կութիւններ են պատահում»:

Շաբաթ, նոյեմբերի 3-ին, հայ դերասանական
մշտական խումբը Թիֆլիսի Ամարային Թատրո-
նում ներկայացրեց «Ալէք և Նախապաշարունմ» և
«Անանուն կատակ»: Հինգշաբթի նոյեմբերի 8-ին
նոյն խումբը կը ներկայացնէ «Հէնրի VIII»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐՈՒՆԳԱՐԱՒԱ

Ինչպէս մենք մեր նախկին համարի մէջ էլ
յիշեցինք, այսօրվան եւրոպական ամբողջ լրա-
գրութիւնն զբաղված է գրեթէ բացառապէս
աւստրո-գերմանական վերջին դաշնադրու-
թեան հարցով: Այս հարցի մասին զանազան
լրագիրներ զանազան գոյնի կարծիքներ են
տալի. շատ քաղաքագէտներ էլ պարծենալով
պնդում են, որ այդ հարցը նրանց յայտնի է
իր ամենանուրբ մանրամասնութիւններով: Ան-
շուշտ դա մեզ չէ զարմացնում, որ լրագիր-
ները կամ քաղաքականութեամբ հետաքրքր-
վող անձինք, աշխատէին մի որ և իցէ կեր-
պով բացատրել իրանց այս անակնկալ և մի և
նոյն ժամանակ տարօրինակ երևոյթը: Աւս-
տրիական լրագիրները մէկը կարծում է, որ
աւստրո-գերմանական դաշնակցութիւնը միայն
լոկ պաշտպանողական բնաւորութիւն ունի, և
թէ Բերլինի վեհաժողովից յետոյ այս դաշ-
նակցութիւնը եւրոպական ընդհանուր խաղա-
ղութեան առաջին և զիսաւոր յենակէտն է:
Հետեւապէս, և աւստրիական լրագրի կար-
ծիքով, ուրեմն այդ դաշնակցութիւնը, յար-
ձակողական «offensiv» բնաւորութիւն չունի:
Այս մի և նոյն միտքը պաշտպանում է նոյն-
պէս և «Fremdenblatt» լրագիրը, որն ասում
է թէ իշխան Բիսմարկ և կամ Անդրաշի ինչ-
պէս և երկու պետութիւնների միահեծան-
ները կապել են այս դաշնակցութիւնը միայն
ընդհանուր խաղաղութեան պաշտպանութեան
համար. և այդ դաշնակցութիւնը միայն նը-
րանց համար կարող է վտանգաւոր համարվել
որոնք դիտաւորութիւն ունեն այդ ընդհա-
նուր խաղաղութիւնը որ և իցէ կերպով չը-
փոխել: Մի և նոյն լրագիրն ասում է, որ
արդարացի չէ յարձակողական համարել մի
այնպիսի դաշնակցութիւն, որ կազմված է ա-
մենայն անկեղծութեամբ միայն ընդհանուր
խաղաղութիւնն ապահովացնելու դիտաւո-
րութեամբ:

Վիէնայից հեռագրել են «Kohn. Zeit.» լր-
ագրին, որ հաստատ աղբիւրներից իմացել
են, որ պ. պ. Բիսմարկի, Անդրաշի և Հա-
մբուրի մէջ կազմվել է աւստրո-գերմանական
դաշնակցութիւնը. այդ պետական անձինքնե-
րը դաշնակցութեան պայմանագիրը ներկայա-
ցրել են իրանց միահեծաններին, որոնք վա-
ւերացրել են այդ պայմանագիրներն իրանց
սեփական ստորագրութեամբ:

Պայմանագիրները ներկայացրին Բիսմարկ և
Համբուրգ, առաջինն ստորագրեց Վիէնայի, իսկ
երկրորդը Ֆրանկ-Յոլմսթի:

Հաւանական են համարում, որ երկու պե-
տութիւններն արդէն միմեանց ուղարկած լե-
նեն պայմանագիրներն պատճէնները, թէեւ
այս վերջին կէտը բոլորովին ստուգված չէ:
«Kohn. Zeitung» լրագիրը, պախարակելով զա-
նազան պաշտօնական և կիսապաշտօնական
թերթերի բռնած ընթացքը, որոնք զանա-
զան տղայամիտ ու խաբէբայական խօսքերով
մոլորեցնում են հասարակութիւնը, բացար-
ձակ յայտնում է, որ աւստրո-գերմանական
դաշնակցութիւնը կայ և գոյութիւն ունի:

Աւստրո-գերմանական դաշնակցութեան վե-
բարերութեամբ, Վիէնայի ու Պէշտի լրա-
գիրների խաղաղասիրական ակնարկութիւն-
ների մասին «Journ. de St Petersburg» լրա-
գիրն ասում է, որ Բերլինի դաշնագրի խա-
ղաղ ճանապարհով իրագործելու մասին, պէտք

չէ անպատճառ պաշտպան հանդիսանալ այն
հոգիներն, որք Բերլինի դաշնագրի համաձայն
այս ինչ կամ այն ինչ պետութեան վարչական
մասն են կազմում: Պաշտպան հանդիսանալով
statu quo-ին, այդ կը նշանակէ քաջալերել
ընդդիմադրութիւնը, իսկ ընդդիմադրութիւնը
քաջալերելով, Արեւելքը չի անդորրանայ: Բայց
և այնպէս, աւելացնում է մի և նոյն լրագի-
րը, եթէ, յիշաւի, աւստրո-գերմանական դա-
շնակցութիւնը խաղաղասիրական դիտաւորու-
թիւն ունենայ, պէտք է խոստովանած, որ
նա կարող է շատ հաստատ հիմք լինել ընդ-
հանուր խաղաղութեան:

«Голосъ» լրագիրն այս մի և նոյն դաշնակ-
ցութեան առիթով հետեւեալ եզրակացութիւնն
է անում. «Այս դաշնակցութիւնը երկու նը-
պատակ ունի, մէկ որ նա կամենում է ստի-
պել Ֆրանսիային հրաժարվել Ֆրանկո-Պրուսի
դաշնագրից, որ նրան առեւտրական ամենա-
բախտաւոր յաջողութիւններ է տալիս և եր-
կրորդ սրանով կամենում են Ռուսաստանին
Գերմանիայից կախումն ունեցող մի երկիր չի-
նել այն լոկ սպառնալիքով, որ Գերմանիան մի
որ կարող է Ֆրանս-գերմանական դաշնակցու-
թիւն հաստատել»:

Հնութիւններով հետաքրքրողներին համար,
մենք աւելորդ չենք համարում պատմել մի
փոքրիկ հետաքրքիր լուր:

Վիէնայի Նվէստ անունով գերեզմանատան
մօտ վերջին ժամանակներս ահագին քանակու-
թեամբ պղնձէ, բրոնզեայ, արծաթէ և ոսկու
փողեր են գտել, որոնք ներկայացնում են Առա-
տանտիանոս Մեծի, նրա մօր Հեղինէի և Լի-
ցիինուսի պատկերները: Այս փողերից հազար
կտորից աւելի արդէն հանել են, և կանոնա-
ւոր աշխատութիւններ են սկսել այդ գաշտը
հետազոտելու: Կարծա՞ծը, որի միջից հանել
են այդ հնութիւնները, պատկանում է Անտոն
Գրէհլեր անունով մի պանդոկապետի:

ՄԵՍԱԿԻ ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 2 նոյեմբերի: «НОВОЕ
ВРЕМЯ» լրագիրը հաղորդում է, որ մի քանի
մարդիկ ծրագիր են կազմել, ներկայացնելու
կառավարութեանը, որ նա հաստատէ Օրէն-
բուրգո-ճաշկէնտեան երկաթուղու գծի ան-
յապաղ շինութիւնը: Գիծը կանցնի Սամար-
կանդի վրայով մինչև Ռուսաստանի ամենա-
վերջին սահմանը Հնդկաստանի ուղղութեամբ:
Ծրագրի մէջ հաշված է որ երկաթուղու
գիծը 2656 վերստ երկայնութիւն կունենայ:
Մի բանկ է հիմնվում, որ կանուանվի Ռու-
սաց երկաթուղիների բանկ: Բանկի Հիմնա-
դիրներն իրանց վրա են առնում նրա կազ-
մակերպութիւնը, գործաւարութիւնը և Օ-
րէնբուրգո-ճաշկէնտեան երկաթուղու շինու-
թիւնն ու նրա շարունակ արդիւնահանու-
թիւնը: Երկաթուղու կոնցէսիան տրվում է
ընկերութեանը 33 տարով և 6 ամսով. այս
ժամանակից 6 ամիսը նուիրված է գործի
կազմակերպութեանը, 4 տարին երկաթուղու
շինութեանը, իսկ 29 տարին գործի արդիւ-
նահանութեանը: Սրանից յետոյ՝ երկաթու-
ղու գիծը կառավարութեան սեփականութիւն
է դառնում, բայց այդ յանձնվում է նրան
և բանկի պահեստի մնացեալ գումարը: Շի-
նութեան համար նշանակված գումարի մնա-
ցորդը որոշված է 174,050,000 րուբլ: Մա-
կովի կարգադրութեամբ հրէական Գամբլից
անունով լրագիրը 5 ամիս ժամանակամի-
ջոցով դադարած է:

Խաչագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ե Ր

Պ. Ներշէշ վ. Մեծատունեանցի յօրինած «Եր-
գարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկա-
կան ուսումնարանաց» վերնագրով գրքերից¹
Հատորն արդէն տպագրված է: Ստարաբայա-
նացի ցանկադուրը կարող են դիմել Թիֆլի-
սում առ գրապահմանոցն մեծ պ. Գրիգո-
րեանցի, իսկ Ախալցխայում առ Հեղինան պ.
Ն. Մեծատունեանց, և առ պ. պ. Յարուս-
թիւն, Բագարատ և Մկրտիչ Արապածանցն,
իւստանշիւր օրինակի գինն է¹ բոլոր
խորատի ծախքը առնողը վրա է:

1-3

ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ՏՈՒՆ ՎԵԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆ
ՅԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ՄՈՒԽՐԱՆՍԿԻ ԵՒ
ՆԵԿ.

Իշխան Իվան Կոնստանտինովիչ Բաղդասարյան
Մուսրանակի յայտում է, որ իր հիմնած Ա-
ՌԵԻՏՊԱԿԱՆ ՏԱՆ բացումն է գործողութիւն-
ները կը սկսին ներկայ տարեկայ նշոյմբերի
1-ից: Առևտրական տան ԳՐԱՍԵՆՆԱԿԸ զը-
անկում է ԹԻՖԼԻՍԸ, Բուսկի բազար հրա-
պարակի վրա ՏՈՒՆ № 10

1-4

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ ԳԱՐՁՈՒԹԻՒՆԸ

այսուհետ է, որ Հիւրանոցատները, ուսելի-
չանքների խառնութատները, խմիչքների կրր-
ականքն ունեցողները եւ դրանց տեսակ առեւ-
թանքականքը պարտաւոր են ներկայ տարվայ
ինչեւնոցների 15-ը վերցնել Թոյաւաւող վը-
սայականքն, Հակաաւակ դեպքաւ բոլոր այդ
տեսակ Հինարկաւթիւնները կը փակվեն:

2-3

ՍԵՆ ԵԱԿՆԵՐ՝ զարձով են տրվում կարասիքներով, բոլոր յարմարություններով, ճաշով և տանայ ճաշի: Մանաւանդ ՅԱՄՄԱՐ ԵՆ ՕՏԱՎԱԳԱՂ ԱՔԱՅԻ ԶԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ Համար: Այնքանաքանակները զտնվում են Նորաշենակայա փողոցի վրա, Պուղինովի տանը: Գնի մասին նշյն տանողը կարելի տեղեկանալ տանաիրովնը:

1—2

ԶԱ.Ք. ԴՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱ-
ԶԱՌԱՆՈՑԸ» ստացել է:

- 1 Սրուան ձտանց ~ Թորոս Աղբար 1 ր. 25 4.
- 2 Ս. Մանգինեանց ~ Կրօնք Հնո
Գերսն Ա. Կան Հետ Առտն Թիւ 1 ր. —
- 3 ԲԺԻԶ Ա. Բարալեանց Ուսումը ~
ՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
- 4 Ա. Բահաթեանց ~ Քերական
ՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒՄ — 25 4.
- 5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՂ ՄԱՐԴԷ ԵՒ
ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՑ 1 ր. —
- 6 Յ. Շիշմանեանի ~ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ
ԹԱՆԵՅ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 4.
- 7 Փարոս 1879 — — — Թ. 1 ր. —

ԶԻԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԵՅԻ ՄԵՔԻՆԾԻ ՁԻԻԹԻՑ, որ պատ-
րաստված է Մօսկվայի ղեկավարը:

ԳԻՐՇՖԵԼԴՍԻՑ

Գիւլյի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ
թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնադործու-
թեամբ և որովհետեւ պատիճների պատրաստելը գաղտնիք է
և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր
Չիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված
պատիճները ֆԻԼՆՍԻԿԱՆ, (ԳԻԻՕՅԻ) ՊԵՏԻՃ-
ՆԻԲԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ուսւ բժշկները և հասարակութիւնը խե-
լացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհե-
տե նորա առիթ չունեն ուստաց փողերով պահպանել ԵՐՏԵ-
ՍԷՄԵՆԵՆԵՆ ԵՐԴԻՆԵՐՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատոնները և տեղական պահեստները: Գլխավոր պահեստները. Մոսկվայում և Լուբեանսկի դեղատուն Եւ. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեօբեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինսկի և Բումոմսկի դեղատուն:

24—25

ՀՈՅԵՄԲԵՐԻ 6

ԹԻՖԼԻՍԻ ԱՆՁԱՌԱՆՈՑ		Բ.	Կ.	ՀԵՌԱՐԻՐ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԻԱՆ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	Փ Օ Ս Տ	ԲԻՇԿԱՆՈՑ	ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
(Երկարություն 5-ին)		8	5		ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Ուղիղ (պոստիպրոկ)		1470	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.		1245	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Հին 20 Գ. 72 պր. 1000 մ.		235	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Վերջին 5% առաջին փո-		230	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
խառնված են տոմ. 100 »		100	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Երկրորդ 5% վերջին »		9	55	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Մարտի կուրսը 270—		100	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Լուսնի կուրսը Օդեսայի		100	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
վրա		4	85	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Վենայի կուրսը արծ. 121 Գ.		310	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Գաբրիելի բարաթը . . .		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Առևտրական բանկի ակ-		7	40	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
ցիան 200 մ.		7	15	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Փոթի Թիֆլիսեան երկա-		5	30	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
թուղու ակցիան 125 մ.		5	30	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Շտաբը բոցդու		10	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» միև տեսակը		8	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» շաբար աւաղը		7	40	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» տրանդուր		7	50	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» մաքուր մատած		4	20	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Բաժնեպահը Երևանու Ա-		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
մերիկայի սերմը		1	40	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Միև տեսակը հին սերմից .		12	40	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Բուրգը թույլ		180	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» թարաքամի		140	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Ալիբուր Երթապալու . . .		50	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» Երևանի		65	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Գարին		26	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Մոմը ընծաքայի (creap.) .		22	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Մեռաքը Երևանու		18	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Կախեթ ունը		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Կախեթ Երևանու (բոմ.) .		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Ֆրիդոնը (յաքը) Ագու-		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
լեայ		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
Կօֆէն մոկի		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» լիանի		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ
» Մանուկնիսոն		—	—	Կոմիտասի և Արշակունյի	ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱՆՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ)	ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	ՀԻՄՆԱՆԵՐԻ ԵՐԿԱՌԹՈՂԻՒ	— ՄԵԴԱԿԻ ՊԱՏԱՌԱՆԵՐ